

II

*(Ոչ օրենսդրական ակտեր)***ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի
ԹԻՎ 811/2012 ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)**

**«Սենքի տաքացուցիչների, համակցված տաքացուցիչների,
սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից
բաղկացած համալիր սարքավորումների, ինչպես նաեւ համակցված
տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից
բաղկացած համալիր սարքավորումների էներգապիտակավորման մասին»
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով «Պիտակավորման եւ արտադրանքի ստանդարտ տեխնիկական
բնութագրի միջոցով էլեկտրաէներգիայի արտադրության հետ կապված
արտադրանքի կողմից էներգիայի եւ այլ ռեսուրսների սպառման վերաբերյալ
նշում կատարելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի
2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ հրահանգը¹ եւ մասնավորապես՝ դրա
10-րդ հոդվածը,

քանի որ՝

¹ ՊՏ L 153, 18.6.2010թ., էջ 1:

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի պատվիրակված ակտեր էլեկտրաէներգիայի արտադրության հետ կապված այն արտադրանքի պիտակավորման վերաբերյալ, որն ունի էներգախնայողության զգալի ներուժ եւ համարժեք ֆունկցիոնալությամբ արդյունավետության մակարդակներում ցուցաբերում է էական տարբերություններ.
- 2) սենքի եւ ջրի տաքացումն ապահովող՝ սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների կողմից սպառվող էներգիան կազմում է Միությունում էներգիայի ընդհանուր պահանջարկի զգալի մասնաբաժինը: Միեւնույն ֆունկցիոնալությամբ սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների միջեւ էներգաարդյունավետության առումով առկա են էական տարբերություններ: Դրանց էներգասպառումը նվազեցնելու հնարավորությունները զգալի են եւ ներառում են դրանց համակցումը ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային համապատասխան սարքերի հետ: Հետեւաբար էներգապիտակավորման պահանջները պետք է տարածվեն սենքի տաքացուցիչների, համակցված տաքացուցիչների, այդպիսի տաքացուցից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների վրա.
- 3) սենքի տաքացուցիչները եւ համակցված տաքացուցիչները, որոնք նախատեսված են առավելապես կենսազանգվածից ստացվող (50 %-ից ավելի) գազային կամ հեղուկ վառելիքով աշխատելու համար, ունեն հատուկ տեխնիկական բնութագրեր, որոնց դեպքում պահանջվում է հետագա տեխնիկական, տնտեսական եւ բնապահպանական վերլուծություններ: Կախված վերլուծությունների արդյունքներից՝ այդ տաքացուցիչներին ներկայացվող էներգապիտակավորման պահանջները պետք է անհրաժեշտության դեպքում սահմանվեն հետագա փուլում.
- 4) պետք է սահմանվեն եւ սենքի տաքացուցիչների ու համակցված տաքացուցիչների պիտակավորման եւ էներգաարդյունավետության

վերաբերյալ ստանդարտ տեղեկությունների մասին ներդաշնակեցված դրույթներ՝ արտադրողների համար այդ տաքացուցիչների էներգաարդյունավետությունը բարելավելու խթան ապահովելու, վերջնական սպառողներին էներգախնայող արտադրանք ձեռք բերել խրախուսելու եւ ներքին շուկայի գործունեությանը նպաստելու նպատակով.

- 5) ինչ վերաբերում է տաքացուցչի յուրաքանչյուր տեսակի դեպքում էներգիայի եւ ծախսերի խնայողության զգալի ծավալին, ապա սույն կանոնակարգով պետք է ներդրվի պիտակավորման նոր՝ A⁺-ից մինչեւ G դասերը ներառող սանդղակ՝ սենքի տաքացուցիչ կաթսաների, սենքի համակցված արտադրության տաքացուցիչների, սենքի՝ ջերմային պոմպերով տաքացուցիչների, սենքի՝ համակցված տաքացուցիչ կաթսաների եւ ջերմային պոմպերով համակցված տաքացուցիչների՝ սենքի ջեռուցման ֆունկցիայի համար: Թեեւ A-ից G դասերը ներառում են պայմանական կաթսաների տարբեր տեսակներ համակցված արտադրության կամ վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների հետ համակցված չլինելու դեպքում, A⁺ եւ A⁺ դասերով պետք է խրախուսել համակցված արտադրության եւ վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը.
- 6) ավելին, պիտակավորման նոր A-G սանդղակը պետք է ներդրվի համակցված տաքացուցիչ կաթսաների եւ ջերմային պոմպերով համակցված տաքացուցիչների ջրատաքացման ֆունկցիայի համար՝ «Ջրատաքացուցիչների, ունակային ջրատաքացուցիչների եւ ջրատաքացուցից ու արեային սարքից բաղկացած համալիր սարքավորումների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 18-ի թիվ 812/2013 պատվիրակված կանոնակարգին (ԵՄ) համապատասխան².
- 7) չորս տարի անց սենքի սեզոնային ջեռուցման եւ ջրային ջեռուցման դասերը պետք է լրացվեն համապատասխանաբար A⁺⁺⁺ եւ A⁺ դասերով,

²Տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 83-րդ էջը:

Եթե կանոնակարգի վերանայմամբ չի ապացուցվում հակառակը, էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործմամբ սենքի՝ բարձր արդյունավետությամբ տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների մուտքը շուկա արագացնելու համար.

- 8) սույն կանոնակարգով պետք է ապահովվի, որ սպառողները ստանան ջերմային պոմպերով տաքացուցիչների արդյունավետության վերաբերյալ ավելի ճշգրիտ համեմատական տեղեկություններ՝ Եվրոպայի երեք կլիմայական գոտիների համար սեզոնային խնայողության հաշվարկների եւ չափումների մեթոդի հիման վրա: Հանձնաժողովը ստանդարտացման եվրոպական մարմիններին լիազորել է ուսումնասիրել, թե արդյոք այլ տաքացուցիչների համար պետք է մշակել համանման մեթոդ: Սույն կանոնակարգի վերանայմամբ կարող են քննարկվել տաքացուցիչ կաթսաների, համակցված տաքացուցիչների եւ արեային տաքացուցիչների համար եվրոպական ստանդարտացված ջեռուցման սեզոնները.
- 9) տաքացուցչի ձայնային հզորության մակարդակը վերջնական սպառողների համար կարող է լինել շատ կարելիոր նկատառում: Ձայնային հզորության մակարդակի վերաբերյալ տեղեկությունները պետք է ներառվեն սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների պիտակների վրա.
- 10) ակնկալվում է, որ սույն կանոնակարգի եւ «Սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 2-ի թիվ 813/2013 կանոնակարգի (ԵՄ)¹ համատեղ ազդեցությունը մինչեւ 2020 թվականը կհանգեցնի նախնական հաշվարկով մոտ 1900 ՊՋ (մոտ 45 մլն.տնհ) տարեկան էներգախնայողության, որը համարժեք է CO₂-ի արտանետումների մոտ 110 մլնտ-ին՝ ի համեմատություն այն բանի, թե ինչ տեղի կունենար, եթե որեւէ միջոց չձեռնարկվեր.

¹ Տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 136-րդ էջը:

- 11) պիտակի վրա տրամադրվող տեղեկությունները պետք է ստացվեն վստահելի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափումների եւ հաշվարկների ընթացակարգերի միջոցով, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման եւ հաշվարկման մեթոդների, այդ թվում՝ առկայության դեպքում՝ Հանձնաժողովի պահանջի հիման վրա ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտների վրա՝ Տեղեկատվական հասարակության ծառայությունների տեխնիկական ստանդարտների, կարգավորումների եւ կանոնների ոլորտում տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգով² սահմանված ընթացակարգերին համապատասխան՝ ելնելով էկոնախագծման պահանջների սահմանման նպատակներից.
- 12) սույն կանոնակարգով պետք է սահմանվեն սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների պիտակների միասնական ձեւն ու բովանդակությունը.
- 13) բացի այդ, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների համար նախատեսված՝ արտադրանքի տեղեկաթերթիկին կամ տեխնիկական փաստաթղթերին ներկայացվող պահանջները.
- 14) ավելին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն սենքի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների հեռակա վաճառքի ցանկացած տեսակի դեպքում եւ այդպիսի տաքացուցիչների ցանկացած գովազդում եւ տեխնիկական գովազդային նյութերում տրամադրվելիք տեղեկություններին ներկայացվող պահանջները.
- 15) բացի սույն կանոնակարգով սահմանված՝ սենքի առանձին տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների համար նախատեսված արտադրանքի

² ՊՏ L 204, 21.7.1998թ., էջ 37:

պիտակներից եւ տեղեկաթերթիկներից՝ մատակարարների կողմից տրամադրված՝ արտադրանքի տեղեկաթերթիկների վրա հիմնված համալիր սարքավորումների պիտակներով եւ տեղեկաթերթիկներով պետք է ապահովվի, որ արեւային սարքերից եւ (կամ) ջերմաստիճանի կարգավորման սարքերից բաղկացած համալիր սարքավորումների էներգաարդյունավետության վերաբերյալ տեղեկությունները մատչելի լինեն վերջնական սպառողներին: Այդպիսի համալիր սարքավորման դեպքում կարելի է ապահովել ամենաարդյունավետ դասը՝ A+++ -ը.

- 16) անհրաժեշտ է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայումը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են ≤ 70 կՎտ նոմինալ հզորությամբ շենքերի տաքացուցիչների եւ համակցված տաքացուցիչների, ≤ 70 կՎտ նոմինալ ջերմատվությամբ սենքի տաքացուցիչների, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների եւ ≤ 70 կՎտ նոմինալ ջերմատվությամբ համակցված տաքացուցից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների էներգապիտակավորմանը եւ դրանց վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջները:
2. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝

- ա) առավելապես կենսազանգվածից ստացվող գազային կամ հեղուկ վառելիքով աշխատելու համար հատուկ նախատեսված տաքացուցիչներ.
- բ) պինդ վառելիքով աշխատող տաքացուցիչներ.
- գ) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/75/ԵՄ հրահանգի³ գործողության ոլորտին պատկանող տաքացուցիչներ.
- դ) միայն խմելու տաք ջրի կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի մատակարարման համար ջերմություն արտադրող տաքացուցիչներ.
- ե) տաքացուցիչներ, որոնք նախատեսված են ջեռուցման եւ այնպիսի գազային ջերմակրի բաշխման համար, ինչպիսին գոլորշին կամ օդն է.
- զ) սենքի՝ 50 կՎտ կամ ավելի առավելագույն էլեկտրական հզորությամբ՝ համակցված արտադրության տաքացուցիչներ:

Հոդված 2

Սահմանումները

Ի հավելումն 2010/30/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումների՝ սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները՝

- 1) «տաքացուցիչ» նշանակում է սենքի տաքացուցիչ կամ համակցված տաքացուցիչ.
- 2) «սենքի տաքացուցիչ» նշանակում է սարք՝
 - ա) որով ջերմություն է հաղորդվում ջրային հիմքով կենտրոնական ջեռուցման համակարգին այն փակ տարածքում ներսի օդի

³) ՊՏ L 334, 2010 թվականի դեկտեմբերի 17, էջ 17:

ջերմաստիճանը ցանկալի մակարդակի հասցնելու եւ պահպանելու նպատակով, ինչպիսիք են շենքը, բնակարանը կամ սենյակը. եւ

- բ) որը համալրված է մեկ կամ ավելի ջերմագեներատորներով.
- 3) «համակցված տաքացուցիչ» նշանակում է սենքի տաքացուցիչ, որը նախատեսված է նաեւ տրված ժամանակահատվածում կոնկրետ ջերմաստիճանային մակարդակով, քանակով եւ հոսքի արագությամբ խմելու տաք ջրի կամ կոմունալ-կենցաղային ջրամատակարարման համակարգին ջերմություն հաղորդելու համար եւ միացված է խմելու կամ կոմունալ-կենցաղային ջրամատակարարման արտաքին աղբյուրին.
- 4) «ջրային հիմքով կենտրոնական ջեռուցման համակարգ» նշանակում է համակարգ, որի դեպքում որպես ջերմակիր օգտագործվում է ջուրը՝ շենքի կամ դրա մասերի ջեռուցման նպատակով կենտրոնական համակարգում արտադրված ջերմությունը ջեռուցման սարքերին բաշխելու համար.
- 5) «ջերմագեներատոր» նշանակում է տաքացուցչի մաս, որը հետեւյալ գործընթացներից մեկի կամ մի քանիսի միջոցով արտադրում է ջերմություն՝
- ա) հանածո վառելիքի եւ (կամ) կենսավառելիքի այրում.
- բ) էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմատարում Ջոուլի էֆեկտի կիրառում.
- գ) օդային, ջրային կամ հողային աղբյուրից շրջակա միջավայրի ջերմության եւ (կամ) հեռացող ջերմության հավաքում.
- 6) «նոմինալ ջերմատվություն» (*Քնոմինալ*) նշանակում է տաքացուցչի հայտարարված ջերմատվություն ստանդարտ նոմինալ պայմաններում սենքին ջերմություն եւ հնարավորության դեպքում ջրին տաքություն հաղորդելիս՝ արտահայտված կՎտ-ով. սենքի՝ ջերմային պոմպերով տաքացուցիչների եւ ջերմային պոմպերով համակցված տաքացուցիչների

համար նոմինալ ջերմատվության սահմանման ստանդարտ նոմինալ պայմանները VII հավելվածի 10-րդ աղյուսակում նշված սկզբնական նախագծային պայմաններն են.

- 7) «ստանդարտ նոմինալ պայմաններ» նշանակում է տաքացուցիչների շահագործման պայմաններ՝ նոմինալ ջերմատվության, սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության, ջրային ջեռուցման էներգաարդյունավետության եւ ձայնային հզորության մակարդակի սահմանման համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում.
- 8) «կենսազանգված» նշանակում է գյուղատնտեսական (ներառյալ՝ բուսական եւ կենդանական ծագման նյութերը), անտառաբուծության եւ հարակից արդյունաբերություններից, այդ թվում՝ ձկնաբուծությունից եւ ջրային կուլտուրաներից, կենսաբանական ծագման արտադրանքի, թափոնների եւ մնացորդների կենսաքայքայվող մասը, ինչպես նաեւ արդյունաբերական եւ քաղաքային թափոնների կենսաքայքայվող մասը.
- 9) «կենսազանգվածից ստացվող վառելիք» նշանակում է կենսազանգվածից արտադրվող գազային կամ հեղուկ վառելիք.
- 10) «հանածո վառելիք» նշանակում է հանածո ծագմամբ գազային կամ հեղուկ վառելիք.
- 11) «սենքի համակցված արտադրության տաքացուցիչ» նշանակում է տաքացուցիչ, որը մեկ գործընթացում միաժամանակ արտադրում է թե՛ ջերմություն, թե՛ էլեկտրաէներգիա.
- 12) «ջերմաստիճանի կարգավորման սարք» նշանակում է սարք, որով կապ է հաստատվում վերջնական սպառողների հետ՝ ներսի օդի ցանկալի ջերմաստիճանի պարամետրերի եւ ժամանակացույցի առնչությամբ, եւ համապատասխան տվյալները հաղորդվում են տաքացուցչի միջերես, ինչպես օրինակ՝ կենտրոնական մշակիչ՝ այդպիսով նպաստելով ներսի օդի ջերմաստիճանի (ջերմաստիճանների) կարգավորմանը.

- 13) «արեւային սարք» նշանակում է միայն արեւային էներգիայով աշխատող համակարգ, արեւային կուտակիչ, արեւային էներգիայով աշխատող ունակային ջրատաքացուցիչ կամ կուտակիչի հանգույցին գտնվող պոմպ, որոնք շուկայահանվում են առանձին.
- 14) «միայն արեւային էներգիայով աշխատող համակարգ» նշանակում է սարք, որը սարքավորված է մեկ կամ ավելի արեւային կուտակիչներով եւ արեւային ունակային ջրատաքացուցիչներով եւ հնարավորության դեպքում կուտակիչի հանգույցում գտնվող պոմպով կամ այլ մասերով, որոնք շուկայահանվում են որպես մեկ ամբողջություն եւ սարքավորված չեն որեւէ ջերմագեներատորով՝ բացառությամբ, հնարավոր է, մեկ կամ ավելի երկդիրք ընկղմվող էլեկտրատաքացուցիչների.
- 15) «արեւային կուտակիչ» նշանակում է սարք, որը նախատեսված է աշխարհում արեւային ճառագայթման լուսավորությունը կլանելու եւ այդ եղանակով արտադրված ջերմային էներգիան դրանով անցնող հեղուկին փոխանցելու համար.
- 16) «ունակային ջրատաքացուցիչ» նշանակում է ջրատաքացման եւ (կամ) սենքի ջեռուցման նպատակով տաք ջուր, այդ թվում՝ ցանկացած լրացուցիչ հավելանյութ կուտակելու համար նախատեսված կոնտեյներ, որը սարքավորված չէ որեւէ ջերմագեներատորով՝ բացառությամբ, հնարավոր է, մեկ կամ ավելի երկդիրք ընկղմվող էլեկտրատաքացուցիչների.
- 17) «արեւային ունակային ջրատաքացուցիչ» նշանակում է ունակային ջրատաքացուցիչ, որում կուտակվում է մեկ կամ ավելի արեւային կուտակիչի միջոցով արտադրված ջերմային էներգիան.
- 18) «երկդիրք ընկղմվող էլեկտրատաքացուցիչ» նշանակում է Ջոուլի էֆեկտի համաձայն աշխատող՝ էլեկտրական դիմադրությամբ տաքացուցիչ, որը կազմում է ունակային ջրատաքացուցչի մաս եւ արտադրում է ջերմություն միայն այն դեպքում, երբ խափանվում է ջերմության արտաքին աղբյուրի

աշխատանքը (այդ թվում՝ տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման ժամանակահատվածում), կամ սարքին վիճակում չէ, կամ որը կազմում է արեւային էներգիայով աշխատող ունակային ջրատաքացուցչի մաս եւ ապահովում է ջերմություն այն դեպքում, երբ ջերմության արեւային աղբյուրը բավարար չէ հարմարավետության անհրաժեշտ մակարդակն ապահովելու համար.

- 19) «սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորում» նշանակում է վերջնական սպառողին առաջարկվող համալիր սարքավորում, որը պարունակում է մեկ կամ ավելի ջերմաստիճանի կարգավորման եւ (կամ) մեկ կամ ավելի արեւային սարքերի հետ համակցված մեկ կամ ավելի սենքի տաքացուցիչներ.
- 20) «համակցված տաքացուցիչ, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորում» նշանակում է վերջնական սպառողին առաջարկվող համալիր սարքավորում, որը պարունակում է մեկ կամ ավելի ջերմաստիճանի կարգավորման եւ (կամ) մեկ կամ ավելի արեւային սարքերի հետ համակցված մեկ կամ ավելի համակցված տաքացուցիչներ.
- 21) «սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետություն» (η_ս) նշանակում է ջեռուցման սահմանված սեզոնին սենքի ջեռուցման պահանջարկի, որն ապահովվում է սենքի տաքացուցչի, համակցված տաքացուցչի, սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորման կամ համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորման միջոցով, եւ այդ պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ էներգիայի տարեկան սպառման հարաբերակցությունը՝ արտահայտված %-ով.

- 22) «ջրային ջեռուցման էներգաարդյունավետություն» (ղջջ.) նշանակում է խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրում համակցված տաքացուցչի կամ համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորման միջոցով ապահովված օգտակար էներգիայի եւ դրա արտադրության համար անհրաժեշտ էներգիայի հարաբերակցությունը՝ արտահայտված %-ով.
- 23) «ծայնային հզորության մակարդակ»(L_{WA}) նշանակում է A կորով կշռված ձայնի հզորություն՝ ներսում եւ (կամ) դրսում՝ արտահայտված դԲ-ով:

II–VIII հավելվածների նպատակներով լրացուցիչ սահմանումները տրված են I հավելվածում:

Հոդված 3

Մատակարարների պարտականությունները եւ ժամանակացույցը

1. 2015 թվականի սեպտեմբերի 26-ից մատակարարները, որոնք շուկայահանում են տաքացուցիչներ եւ (կամ) հանձնում են դրանք շահագործման, այդ թվում՝ այն տաքացուցիչները, որոնք ընդգրկված են սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների կազմում, ապահովում են, որ՝

- ա) II հավելվածի 1-ին կետում սահմանված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող՝ սենքի յուրաքանչյուր տաքացուցչի համար տրամադրվի III հավելվածի 1.1 կետում նշված տեղեկությունների ձեւաչափին եւ բովանդակությանը համապատասխանող տպագիր պիտակ, ընդ որում, սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչների դեպքում տպագիր պիտակը տրամադրվում է առնվազն ջերմագեներատորի փաթեթվածքում, սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների կազմում օգտագործվելու համար

- նախատեսված՝ սենքի տաքացուցիչների դեպքում սենքի յուրաքանչյուր տաքացուցիչի համար տրամադրվում է III հավելվածի 3-րդ կետում սահմանված տեղեկությունների ձեռնարկին եւ բովանդակությանը համապատասխանող երկրորդ պիտակ.
- բ) սենքի յուրաքանչյուր տաքացուցիչի համար տրամադրվի IV հավելվածի 1-ին կետում սահմանված՝ արտադրանքի տեղեկաթերթիկ, ընդ որում, սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչների դեպքում արտադրանքի տեղեկաթերթիկը տրամադրվում է առնվազն ջերմագեներատորի համար, սենքի տաքացուցիչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների կազմում օգտագործվելու համար նախատեսված՝ սենքի տաքացուցիչների դեպքում տրամադրվում է IV հավելվածի 5-րդ կետում սահմանված երկրորդ տեղեկաթերթիկ.
- գ) անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին ըստ պահանջի տրամադրվեն V հավելվածի 1-ին կետում սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
- դ) սենքի տաքացուցիչի կոնկրետ մոդելին վերաբերող եւ էներգիայի սպառման կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում տարածքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում.
- ե) սենքի տաքացուցիչի կոնկրետ մոդելին վերաբերող եւ դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում տարածքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում:

2019 թվականի սեպտեմբերի 26-ից III հավելվածի 1.2 կետում նշված տեղեկությունների ձեւաչափին եւ բովանդակությանը համապատասխանող տպագիր պիտակ է տրամադրվում II հավելվածի 1-ին կետում սահմանված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող յուրաքանչյուր սենքի տաքացուցչի համար, ընդ որում, սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչների դեպքում տպագիր պիտակը ներկայացվում է ջերմագեներատորի փաթեթվածքում:

2. 2015 թվականի սեպտեմբերի 26-ից համակցված տաքացուցիչներ շուկայահանող եւ (կամ) դրանք շահագործման հանձնող, այդ թվում՝ այն տաքացուցիչները, որոնք ընդգրկված են համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների կազմում, մատակարարներն ապահովում են, որ՝

- ա) II հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերում սահմանված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող սենքի յուրաքանչյուր համակցված տաքացուցչի համար տրամադրվի III հավելվածի 2.1 կետում նշված տեղեկությունների ձեւաչափին եւ բովանդակությանը համապատասխանող տպագիր պիտակ, ընդ որում, սենքի՝ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների համար տպագիր պիտակը ներկայացվում է առնվազն ջերմագեներատորի փաթեթվածքում, համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների կազմում օգտագործվելու համար նախատեսված համակցված տաքացուցիչների դեպքում յուրաքանչյուր համակցված տաքացուցչի համար տրամադրվում է III հավելվածի 4-րդ կետում սահմանված տեղեկությունների ձեւաչափին եւ բովանդակությանը համապատասխանող երկրորդ պիտակ.

- բ) յուրաքանչյուր համակցված տաքացուցչի համար տրամադրվի IV հավելվածի 2-րդ կետում նշված արտադրանքի տեղեկաթերթիկ, ընդ որում, ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների դեպքում արտադրանքի տեղեկաթերթիկը տրամադրվում է առնվազն ջերմագեներատորի համար, համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների կազմում օգտագործվելու համար նախատեսված համակցված տաքացուցիչների դեպքում տրամադրվում է IV հավելվածի 6-րդ կետում սահմանված երկրորդ տեղեկաթերթիկը.
- գ) անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին ըստ պահանջի տրամադրվեն V հավելվածի 2-րդ կետում սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
- դ) համակցված տաքացուցչի կոնկրետ մոդելին վերաբերող եւ էներգիայի սպառման կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում.
- ե) համակցված տաքացուցչի կոնկրետ մոդելին վերաբերող եւ դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում:

2019 թվականի սեպտեմբերի 26-ից III հավելվածի 2.2 կետում նշված տեղեկությունների ձեւաչափին եւ բովանդակությանը համապատասխանող տպագիր պիտակ է տրամադրվում II հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող

յուրաքանչյուր համակցված տաքացուցչի համար, ընդ որում, ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների դեպքում տպագիր պիտակը ներկայացվում է ջերմագեներատորի փաթեթվածքում:

3. 2015 թվականի սեպտեմբերի 26-ից ջերմաստիճանի կարգավորման սարքեր շուկայահանող եւ (կամ) դրանք շահագործման հանձնող մատակարարներն ապահովում են, որ՝

ա) տրամադրվի IV հավելվածի 3-րդ կետում սահմանված՝ արտադրանքի տեղեկաթերթիկը.

բ) անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին ըստ պահանջի տրամադրվեն V հավելվածի 3-րդ կետում սահմանված տեխնիկական փաստաթղթերը:

4. 2015 թվականի սեպտեմբերի 26-ից արեւային սարքեր շուկայահանող եւ (կամ) դրանք շահագործման հանձնող մատակարարներն ապահովում են, որ՝

ա) տրամադրվի IV հավելվածի 4-րդ կետում սահմանված՝ արտադրանքի տեղեկաթերթիկը.

բ) անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին ըստ պահանջի տրամադրվեն V հավելվածի 4-րդ կետում սահմանված տեխնիկական փաստաթղթերը:

5. 2015 թվականի սեպտեմբերի 26-ից սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումներ շուկայահանող եւ (կամ) դրանք շահագործման հանձնող մատակարարներն ապահովում են, որ՝

ա) II հավելվածի 1-ին կետում սահմանված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող՝ սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած յուրաքանչյուր համալիր սարքավորման համար

տրամադրվի III հավելվածի 3-րդ կետում սահմանված տեղեկությունների ձեւաչափին եւ բովանդակությանը համապատասխանող տպագիր պիտակ.

- բ) սենքի տաքացուցից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած յուրաքանչյուր համալիր սարքավորման համար տրամադրվի IV հավելվածի 5-րդ կետում սահմանված՝ արտադրանքի տեղեկաթերթիկը.
- գ) անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին ըստ պահանջի տրամադրվեն V հավելվածի 5-րդ կետում սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
- դ) սենքի տաքացուցից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած կոնկրետ համալիր սարքավորմանը վերաբերող եւ էներգիայի կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում.
- ե) սենքի տաքացուցից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած կոնկրետ համալիր սարքավորմանը վերաբերող եւ դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում:

6. 2015 թվականի սեպտեմբերի 26-ից համակցված տաքացուցից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումներ շուկայահանող եւ (կամ) դրանք շահագործման հանձնող մատակարարներն ապահովում են, որ՝

- ա) II հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերում սահմանված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին ու ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասերին համապատասխանող՝ համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած յուրաքանչյուր համալիր սարքավորման համար տրամադրվի III հավելվածի 4-րդ կետում սահմանված տեղեկությունների ձեւաչափին եւ բովանդակությանը համապատասխանող տպագիր պիտակ.
- բ) համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած յուրաքանչյուր համալիր սարքավորման համար տրամադրվի IV հավելվածի 6-րդ կետում սահմանված՝ արտադրանքի տեղեկաթերթիկը.
- գ) անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին ըստ պահանջի տրամադրվեն V հավելվածի 6-րդ կետում սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
- դ) համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած կոնկրետ համալիր սարքավորմանը վերաբերող եւ էներգիայի կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում.
- ե) համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած կոնկրետ համալիր սարքավորմանը վերաբերող եւ դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում:

Հոդված 4

Վաճառողների պարտականությունները

1. Սենքի տաքացուցիչների վաճառողներն ապահովում են, որ՝
 - ա) վաճառքի կետում սենքի յուրաքանչյուր տաքացուցիչ իր առջեւի մասի արտաքին մակերեսային վրա, 3(1) հոդվածին համապատասխան, III հավելվածի 1-ին կետով սահմանված կարգով կրի մատակարարների կողմից տրամադրված պիտակն այնպես, որ այն հստակ տեսանելի լինի.
 - բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկված՝ սենքի տաքացուցիչները, որոնց դեպքում վերջնական չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողը սենքի տաքացուցիչը կտեսնի ցուցադրված վիճակում, շուկայահանվեն մատակարարների կողմից VI հավելվածի 1-ին կետին համապատասխան տրամադրված տեղեկությունները.
 - գ) սենքի տաքացուցչի կոնկրետ մոդելին վերաբերող եւ էներգիայի կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում.
 - դ) սենքի տաքացուցչի կոնկրետ մոդելին վերաբերող եւ դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում:
2. Համակցված տաքացուցիչների վաճառողներն ապահովում են, որ՝
 - ա) վաճառքի կետում յուրաքանչյուր համակցված տաքացուցիչ իր առջեւի մասի արտաքին մակերեսային, 3(2) հոդվածին համապատասխան, III

հավելվածի 2-րդ կետով սահմանված կարգով կրի մատակարարների կողմից տրամադրված պիտակն այնպես, որ այն հստակ տեսանելի լինի.

- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկված համակցված տաքացուցիչները, որոնց դեպքում չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողը համակցված տաքացուցիչը կտեսնի ցուցադրված վիճակում, շուկայահանվեն մատակարարների կողմից VI հավելվածի 2-րդ կետին համապատասխան տրամադրված տեղեկությունները.
- գ) համակցված տաքացուցչի կոնկրետ մոդելին վերաբերող եւ էներգիայի կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում.
- դ) համակցված տաքացուցչի կոնկրետ մոդելին վերաբերող եւ դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում:

3. Սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների վաճառողները 3(1), (3), (4) եւ (5) հոդվածներին համապատասխան մատակարարների կողմից տրամադրված պիտակի եւ տեղեկաթերթիկների հիման վրա ապահովում են, որ՝

- ա) կոնկրետ համալիր սարքավորման համար արված ցանկացած առաջարկ ներառի համապատասխանաբար միջին, ավելի ցուրտ կամ ավելի տաք կլիմայական պայմաններում այդ համալիր սարքավորման համար սահմանված՝ սենքի սեզոնային ջեռուցման

Էներգաարդյունավետությունը եւ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝ համալիր սարքավորման հետ ցուցադրելով III հավելվածի 3-րդ կետում սահմանված պիտակը եւ տրամադրելով IV հավելվածի 5-րդ կետում սահմանված՝ այդ համալիր սարքավորման տեխնիկական բնութագրերին համապատասխան պատշաճորեն լրացված տեղեկաթերթիկը.

- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկված՝ սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումները, որոնց դեպքում չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողը սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումը կտեսնի ցուցադրված վիճակում, շուկայահանվեն VI հավելվածի 3-րդ կետին համապատասխան տրամադրված տեղեկություններով.
- գ) սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած կոնկրետ համալիր սարքավորմանը վերաբերող եւ էներգիայի կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում.
- դ) սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած կոնկրետ համալիր սարքավորմանը վերաբերող եւ դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում:

4. Համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների վաճառողները 3(2), (3), (4) եւ (6) հոդվածներին համապատասխան մատակարարների կողմից տրամադրված պիտակի եւ տեղեկաթերթիկների հիման վրա ապահովում են, որ՝

- ա) կոնկրետ համալիր սարքավորման համար արված ցանկացած առաջարկ ներառի համապատասխանաբար միջին, ավելի ցուրտ կամ ավելի տաք կլիմայական պայմաններում այդ համալիր սարքավորման համար սահմանված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը, ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը, սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝ համալիր սարքավորման հետ ցուցադրելով III հավելվածի 4-րդ կետում նշված պիտակը եւ տրամադրելով IV հավելվածի 6-րդ կետում սահմանված՝ այդ համալիր սարքավորման տեխնիկական բնութագրերին համապատասխան պատշաճորեն լրացված տեղեկաթերթիկը.
- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկված՝ համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումները, որոնց դեպքում չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողը համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումը կտեսնի ցուցադրված վիճակում, շուկայահանվեն VI հավելվածի 4-րդ կետին համապատասխան տրամադրված տեղեկություններով.
- գ) համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած կոնկրետ համալիր սարքավորմանը

վերաբերող եւ էներգիայի կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում.

- դ) համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած կոնկրետ համալիր սարքավորմանը վերաբերող եւ դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ներառի այդ մոդելի համար նախատեսված միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասի եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասի մասին նշում:

Հոդված 5

Չափման եւ հաշվարկման մեթոդները

3-րդ եւ 4-րդ հոդվածների համաձայն տրամադրվելիք տեղեկությունները ձեռք են բերվում չափման եւ հաշվարկման հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդների կիրառմամբ, որոնք հիմնված են VII հավելվածով սահմանված՝ չափման եւ հաշվարկման ընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա:

Հոդված 6

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Սենքի սեզոնային ջեռուցման հայտարարված էներգաարդյունավետության դասը, ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասը, սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը, ջրային ջեռուցման

Էներգաարդյունավետությունը եւ տաքացուցիչների ձայնային հզորության մակարդակի համապատասխանությունը գնահատելիս անդամ պետությունները կիրառում են VIII հավելվածով սահմանված ընթացակարգը:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը պետք է տեխնոլոգիական առաջընթացի լույսի ներքո վերանայի սույն կանոնակարգը ոչ ուշ, քան այն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարի հետո: Մասնավորապես, վերանայմամբ պետք է գնահատվի III հավելվածի 1.2 եւ 2.2 կետերում սահմանված պիտակների առնչությամբ շուկայում տաքացուցիչների տարբեր տեսակների մասնաբաժնում տեղի ունեցած ցանկացած զգալի փոփոխություն, տաքացուցչի՝ ստանդարտացված ջեռուցման սեզոնների հիման վրա ջերմային պոմպի արդյունավետությունից բացի այլ արդյունավետություն նշելու հնարավորությունը եւ արդյունավետությունը, III հավելվածի 3-րդ եւ 4-րդ կետերում ու IV հավելվածի 5-րդ եւ 6-րդ կետերում սահմանված՝ համալիր սարքավորումների տեղեկաթերթիկների եւ պիտակների համապատասխանությունն ու ծխատարով պասիվ ջերմափոխանակիչ սարքերը սույն կանոնակարգի գործողության ոլորտում ընդգրկելու նպատակահարմարությունը:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելը եւ կիրառությունը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակման օրվան հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2013 թվականի փետրվարի 18-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

*ՀԱՎԵԼՎԱԾ I***II-VIII հավելվածների համար կիրառելի սահմանումները**

II-VIII հավելվածների նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

Տաքացուցիչներին առնչվող սահմանումները.

- 1) «սենքի տաքացուցիչ կաթսա», IV հավելվածի 1-4-րդ պատկերների նպատակով այսուհետ՝ կաթսա, նշանակում է սենքի տաքացուցիչ, որն արտադրում է ջերմություն հանաժո վառելիքի եւ (կամ) կենսավառելիքի այրման միջոցով եւ (կամ) էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմատարում Ջոուլի էֆեկտի կիրառմամբ.
- 2) «համակցված տաքացուցիչ կաթսա», IV հավելվածի 1-4-րդ պատկերների նպատակով այսուհետ՝ կաթսա, նշանակում է սենքի տաքացուցիչ կաթսա, որը նախատեսված է նաեւ կոնկրետ պարբերականությամբ կոնկրետ ջերմաստիճանային մակարդակով, քանակով եւ հոսքի արագությամբ խմելու տաք ջրի կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրին ջերմություն հաղորդելու համար եւ միացված է խմելու կամ կոմունալ-կենցաղային ջրամատակարարման արտաքին աղբյուրին.
- 3) «սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչ», IV հավելվածի 1-ին եւ 3-րդ պատկերների նպատակով այսուհետ՝ ջերմային պոմպ, նշանակում է սենքի տաքացուցիչ, որը ջերմություն արտադրելու համար օգտագործում է օդային, ջրային կամ հողային աղբյուրից ստացվող շրջակա միջավայրի ջերմությունը եւ (կամ) արտանետվող ջերմությունը. սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչը կարող է համարվել մեկ կամ ավելի լրացուցիչ տաքացուցիչներով՝ էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմատարերում օգտագործելով Ջոուլի էֆեկտը կամ հանաժո վառելիքի եւ (կամ) կենսավառելիքի այրումը.

- 4) «ջերմային պոմպով համակցված տաքացուցիչ», IV հավելվածի 1-ին եւ 3-րդ պատկերների նպատակով այսուհետ՝ ջերմային պոմպ, նշանակում է սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչ, որը նախատեսված է նաեւ կոնկրետ պարբերականությամբ կոնկրետ ջերմաստիճանային մակարդակով, քանակով եւ հոսքի արագությամբ խմելու տաք ջրի կամ կոմունալ-կենցաղային ջրամատակարարման համակարգին ջերմություն հաղորդելու համար եւ միացված է խմելու կամ կոմունալ-կենցաղային ջրամատակարարման արտաքին աղբյուրին.
- 5) «լրացուցիչ տաքացուցիչ» նշանակում է ոչ առաջնային տաքացուցիչ, որն արտադրում է ջերմություն այն դեպքերում, երբ ջերմային էներգիայի պահանջարկն ավելի մեծ է, քան առաջնային տաքացուցչի նոմինալ ջերմատվությունը.
- 6) «լրացուցիչ տաքացուցչի նոմինալ ջերմատվություն» (*P_{լրաց.}*) նշանակում է լրացուցիչ տաքացուցչի նոմինալ ջերմատվություն՝ ստանդարտ նոմինալ պայմաններում սենքին ջերմություն եւ հնարավորության դեպքում ջրին տաքություն հաղորդելիս՝ արտահայտված կՎտ-ով. եթե լրացուցիչ տաքացուցիչը սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչն է կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը, ապա լրացուցիչ տաքացուցչի նոմինալ ջերմատվության սահմանման ստանդարտ նոմինալ պայմանը դրսի օդի ջերմաստիճանն է՝ $T_j = + 7 \text{ }^\circ\text{C}$.
- (7) «դրսի օդի ջերմաստիճան» (*T_j*) նշանակում է դրսի օդի ջերմաստիճան՝ ըստ չոր ջերմաչափի՝ արտահայտված աստիճան Ցելսիուսով. հարաբերական խոնավությունը կարող է նշվել թաց ջերմաչափի ջերմաստիճանով
- 8) «էներգիայի տարեկան սպառում» (*Q_{HE}*) նշանակում է տաքացուցչի տարեկան էներգասպառում, որով սենքի ջեռուցման մակարդակը պետք է համապատասխանի ջեռուցման տրված սեզոնի համար տարեկան

ջեռուցման ելակետային պահանջարկի բավարարմանը՝ արտահայտված կՎՏԺ-ով՝ վերջնական էներգիայի հաշվարկով եւ (կամ) ԳՋ-ով՝ ԱԱՋԱ-ի հաշվարկով.

- 9) «սպասման ռեժիմ» նշանակում է վիճակ, երբ տաքացուցիչը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, նախատեսված ձեռով աշխատելու համար կախված է էլեկտրասնուցման աղբյուրից ստացվող էներգիայից եւ կատարում է միայն հետեւյալ գործառույթները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակով՝ վերաակտիվացման գործառույթ կամ վերաակտիվացման գործառույթ եւ միայն վերաակտիվացման գործառույթի ակտիվացման նշում եւ (կամ) տեղեկության կամ կարգավիճակի ցուցադրում.
- 10) «սպասման ռեժիմում էներգիայի սպառում» (P_{on}) նշանակում է տաքացուցչի՝ սպասման ռեժիմում էներգասպառում՝ արտահայտված կՎտ-ով.
- 11) «փոխարկման գործակից» (Φ) նշանակում է գործակից, որն արտացոլում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012/27/ԵՄ հրահանգում նշված՝ ԵՄ-ում էլեկտրաէներգիայի արտադրության օգտակար գործողության միջին գործակցի գնահատված 40%-ը². փոխարկման գործակցի արժեքն է՝ $\Phi = 2,5$.
- 12) «այրման առավելագույն ջերմատվության արժեք» (AA_{2U}) նշանակում է վառելիքի միավորի կողմից անջատված ընդհանուր ջերմաքանակ, երբ այդ վառելիքն ամբողջությամբ այրվում է թթվածնով, եւ երբ այրման արգասիքները վերադառնում են շրջակա միջավայրի ջերմաստիճանին. այս քանակը ներառում է վառելիքում պարունակվող ցանկացած ջրային գոլորշու եւ վառելիքում պարունակվող ցանկացած ջրածնի այրման հետեւանքով առաջացած ջրային գոլորշու խտացման ջերմությունը.

² ՊՏ L 315, 14.11.2012թ., էջ 1:

Սենքի տաքացուցիչ կաթսաներին, համակցված տաքացուցիչ կաթսաներին եւ սենքի համակցված արտադրության տաքացուցիչներին առնչվող սահմանումները.

13) «սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունն ակտիվ ռեժիմում» (*η_{ս.ակտիվռեժիմ}*) նշանակում է՝

- սենքի՝ վառելիքով աշխատող տաքացուցիչ կաթսաների եւ վառելիքով աշխատող համակցված տաքացուցիչ կաթսաների համար՝ նոմինալ ջերմատվության դեպքում օգտակար հզորության եւ նոմինալ ջերմատվության 30 %-ի դեպքում օգտակար հզորության կշռված միջինը՝ արտահայտված %-ով,
- սենքի էլեկտրական տաքացուցիչ կաթսաների եւ էլեկտրական համակցված տաքացուցիչ կաթսաների համար՝ նոմինալ ջերմատվության դեպքում օգտակար հզորությունը՝ արտահայտված %-ով,
- սենքի՝ լրացուցիչ տաքացուցիչներով չհամալրված՝ համակցված արտադրության տաքացուցիչների համար՝ նոմինալ ջերմատվության դեպքում օգտակար հզորությունը՝ արտահայտված %-ով,
- սենքի՝ լրացուցիչ տաքացուցիչներով համալրված՝ համակցված արտադրության տաքացուցիչների համար՝ ապակտիվացված լրացուցիչ տաքացուցչով նոմինալ ջերմատվության դեպքում օգտակար հզորության եւ ակտիվացված լրացուցիչ տաքացուցչով նոմինալ ջերմատվության դեպքում օգտակար հզորության կշռված միջինը՝ արտահայտված %-ով.

14) «օգտակար արդյունավետություն» (*η*) նշանակում է սենքի տաքացուցիչ կաթսայի, համակցված տաքացուցիչ կաթսայի կամ սենքի՝ համակցված արտադրության տաքացուցչի օգտակար ջերմային հզորության եւ էներգիայի

- ընդհանուր սպառման հարաբերակցությունը՝ արտահայտված %-ով, ընդ որում, էներգիայի ընդհանուր սպառումն արտահայտվում է *ԱԱՋԱ-ով* եւ (կամ) վերջնական էներգիայով՝ բազմապատկած *ՓԳ-ով*.
- 15) «օգտակար ջերմային հզորություն» (P) նշանակում է սենքի տաքացուցիչ կաթսայի, համակցված տաքացուցիչ կաթսայի կամ սենքի՝ համակցված արտադրության տաքացուցչի՝ ջերմակրին փոխանցված ջերմային հզորությունը՝ արտահայտված կՎտ-ով.
- 16) «էլեկտրական ՕԳԳ» (η_{el}) նշանակում է էլեկտրաէներգիայի արտադրության եւ սենքի՝ համակցված արտադրության տաքացուցչի էներգիայի ընդհանուր սպառման հարաբերակցությունը՝ արտահայտված %-ով, ընդ որում, էներգիայի ընդհանուր սպառումն արտահայտվում է *ԱԱՋԱ-ով* եւ (կամ) վերջնական էներգիայով՝ բազմապատկած *ՓԳ-ով*.
- 17) «վառքի հրաձորանի էներգասպառում» ($P_{վառք}$) նշանակում է հիմնական հրաձորանը բռնկելու համար նախատեսված հրաձորանի էներգասպառումը՝ արտահայտված Վտ-ով՝ *ԱԱՋԱ-ի* հաշվարկով.
- 18) «կոնդենսացիոն կաթսա» նշանակում է սենքի տաքացուցիչ կաթսա կամ համակցված տաքացուցիչ կաթսա, որում շահագործման բնականոն պայմաններում եւ շահագործման ընթացքում ջրի ջերմաստիճանային ռեժիմում այրման արգասիքներում ջրային գոլորշին մասամբ կոնդենսացվում է՝ ջրային գոլորշու տեսակարար ջերմությունը տաքացման նպատակներով օգտագործելու նպատակով.
- 19) «էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառում» նշանակում է սենքի տաքացուցիչ կաթսայի, համակցված տաքացուցիչ կաթսայի կամ սենքի՝ համակցված արտադրության տաքացուցչի նախանշված ձեռով շահագործման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի տարեկան ծավալը՝ հաշվարկված էլեկտրաէներգիայի սպառման ծավալով՝ լրիվ բեռնվածքով (*էլառավել.*), մասնակի բեռնվածքով աշխատեցնելիս (*էլնվազ.*), սպասման ռեժիմում եւ

յուրաքանչյուր ռեժիմում սովորական աշխատանքային ժամերին՝ արտահայտված կՎտժ-ով՝ վերջնական էներգիայի հաշվարկով.

- 20) «սպասման ռեժիմում ջերմության կորուստ» (*Psuy. nեժիմ*) նշանակում է սենքի տաքացուցիչ կաթսայի, համակցված տաքացուցիչ կաթսայի կամ սենքի՝ համակցված արտադրության տաքացուցչի՝ առանց ջերմության պահանջի շահագործման ռեժիմներում ջերմության կորուստը՝ արտահայտված կՎտ-ով.

Սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչներին եւ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչներին առնչվող սահմանումները.

- 21) «արդյունավետության դրվածքային գործակից» (*ԱԳ_{դրվածքային}*) կամ «առաջնային էներգիայի դրվածքային գործակից» (*ԱԷԳ_{դրվածքային}*) նշանակում է հայտարարված ջերմունակությունը՝ արտահայտված կՎտ-ով, բաժանած ստանդարտ պայմաններում մատակարարվող ջերմության համար էներգիայի սպառման ծավալին՝ արտահայտված կՎտ-ով՝ *ԱԱԶԱ-ի* հաշվարկով եւ (կամ) կՎտ-ով՝ վերջնական էներգիայի հաշվարկով՝ բազմապատկած *ՓԳ-ով*.

- 22) «նոմինալ նախագծային պայմաններ» նշանակում է նոմինալ նախագծային ջերմաստիճանի, երկարժեք ջերմաստիճանի եւ շահագործման առավելագույն սահմանային ջերմաստիճանի համակցությունը՝ VII հավելվածի 10-րդ աղյուսակում սահմանված կարգով.

- 23) «նոմինալ նախագծային ջերմաստիճան» (*Tնախագծ.հ*) նշանակում է VII հավելվածի 10-րդ աղյուսակում սահմանված կարգով աստիճան Յելսիուսով արտահայտվող՝ դրսի օդի ջերմաստիճան, որի դեպքում մասնակի բեռնվածքի գործակիցը հավասար է 1-ի.

- 24) «մասնակի բեռնվածքի գործակից» (*մբ(T_i)*) նշանակում է դրսի օդի մինուս 16 °C ջերմաստիճանը բաժանած նոմինալ նախագծային մինուս 16 °C ջերմաստիճանին.

- 25) «Ջեռուցման սեզոն» նշանակում է միջին, ավելի ցուրտ եւ ավելի տաք կլիմայական պայմաններում շահագործման համալիր պայմաններ, որոնցով մեկ բինի հաշվարկով նկարագրվում են դրսի օդի ջերմաստիճանների եւ այն ժամերի քանակի համակցությունը, երբ այդ ջերմաստիճաններն առկա են տվյալ սեզոնում.
- 26) «բին» (*բին*) նշանակում է դրսի օդի ջերմաստիճանի (T_j) եւ բին ժամերի համակցություն՝ VII հավելվածի 12-րդ աղյուսակում սահմանված կարգով.
- 27) «բին ժամեր» (H_j) նշանակում է յուրաքանչյուր տարվա ժամերով արտահայտված՝ ջեռուցման յուրաքանչյուր սեզոնի այն ժամերը, որոնց ընթացքում յուրաքանչյուր բինի համար առաջանում է դրսի օդի ջերմաստիճան՝ VII հավելվածի 12-րդ աղյուսակում սահմանված կարգով.
- 28) «Ջեռուցման մասնակի բեռնվածք» ($U_{\Sigma}(T_j)$) նշանակում է դրսի օդի կոնկրետ ջերմաստիճանի պայմաններում ջերմային բեռնվածք, որը հաշվարկվում է հետեւյալ ձեւով՝ նախագծային բեռնվածք՝ բազմապատկած մասնակի բեռնվածքի գործակցով, եւ արտահայտվում է կՎտ-ով.
- 29) «արդյունավետության սեզոնային գործակից» (UUF) կամ «առաջնային էներգիայի սեզոնային գործակից» ($UEUF$) նշանակում է էլեկտրաէներգիայով աշխատող՝ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի ընդհանուր գործակից կամ սահմանված ջեռուցման սեզոնին բնորոշ վառելիքով աշխատող՝ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի առաջնային էներգիայի ընդհանուր գործակիցը, որը հաշվարկվում է հետեւյալ ձեւով՝ սկզբնական տարեկան ջերմային պահանջարկ՝ բաժանած էներգիայի տարեկան սպառման ծավալի.
- 30) «տարեկան ջեռուցման նոմինալ պահանջարկ» (Q_H) նշանակում է նշված ջեռուցման սեզոնին նոմինալ ջերմային պահանջարկ, որը պետք է որպես հիմք օգտագործվի UUF -ի կամ $UEUF$ -ի հաշվարկման համար եւ

հաշվարկվում է որպես ջեռուցման նախագծային բեռնվածքի եւ ակտիվ ռեժիմում տարեկան համարժեք ժամերի արտադրյալ՝ արտահայտված կՎտժ-ով.

- 31) «ակտիվ ռեժիմում տարեկան համարժեք ժամեր» (H_{HE}) նշանակում է տարեկան ենթադրյալ այն ժամաքանակը, որի ընթացքում սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը պետք է ապահովի ջեռուցման նախագծային բեռնվածքը՝ տարեկան նոմինալ ջերմային պահանջարկը բավարարելու համար՝ արտահայտված ժ-ով.
- 32) «ակտիվ ռեժիմում արդյունավետության գործակից» ($UUF_{u.n.}$) կամ «ակտիվ ռեժիմում առաջնային էներգիայի գործակից» ($UEUF_{u.n.}$) նշանակում է ակտիվ ռեժիմում էլեկտրաէներգիայով աշխատող՝ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի արդյունավետության միջին գործակիցը կամ սահմանված ջեռուցման սեզոնում ակտիվ ռեժիմում վառելիքով աշխատող՝ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի առաջնային էներգիայի միջին գործակիցը.
- 33) «ջեռուցման համար լրացուցիչ տաքացուցիչ» ($l_{rsg.}(T_j)$) նշանակում է լրացուցիչ տաքացուցչի ջերմային դրվածքային հզորություն՝ $P_{l_{rsg.}}$, որը լրացնում է հայտարարված ջերմային հզորությունը՝ արտահայտված կՎտ-ով, ջեռուցման մասնակի բեռնվածքը բավարարելու համար այն դեպքում, երբ հայտարարված ջերմային հզորությունը ջեռուցման մասնակի բեռնվածքից պակաս է.
- 34) «բինին հատուկ արդյունավետության գործակից» ($UF_{bin}(T_j)$) կամ «բինին հատուկ առաջնային էներգիայի գործակից» ($UE_{bin}(T_j)$) նշանակում է էլեկտրաէներգիայով աշխատող՝ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի արդյունավետության գործակից կամ սեզոնին յուրաքանչյուր բինին հատուկ վառելիքով

աշխատող՝ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի առաջնային էներգիայի գործակից, որը ստացվում է ջեռուցման մասնակի բեռնվածքից, հայտարարված ջերմային հզորությունից ու նշված բիների համար արդյունավետության հայտարարված գործակցից եւ այլ բիների համար հաշվարկվում է միջարկման կամ արտարկման միջոցով, անհրաժեշտության դեպքում ճշգրտվում է նվազման գործակցով.

- 35) «հայտարարված ջերմային հզորություն» (*Ph.h(T_j)*) նշանակում է ջերմային հզորություն՝ արտահայտված կՎտ-ով, որը սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը կարող է ապահովել դրսի օդի ջերմաստիճանի համար.
- 36) «հզորության կառավարում» նշանակում է սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի՝ սառեցման շրջափուլն իրականացնելու համար անհրաժեշտ հեղուկներից առնվազն մեկի հոսքի ծավալային արագությունը փոփոխելու միջոցով դրա հզորությունը փոփոխելու կարողություն, որը պետք է նշվի որպես «ֆիքսված» այն դեպքում, երբ հոսքի ծավալային արագությունը չի կարող փոփոխվել կամ լինել «փոփոխական» այն դեպքում, երբ հոսքի ծավալային արագությունը փոփոխվում է կամ տատանվում է երկու կամ ավելի քայլերի դեպքում.
- 37) «ջեռուցման նախագծային բեռնվածք» (*P_{նախագծ.հ}*) նշանակում է սկզբնական նախագծային ջերմաստիճանի պայմաններում սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի նոմինալ ջերմատվություն (*P_{նոմինալ}*)՝ արտահայտված կՎտ-ով, ընդ որում, ջեռուցման նախագծային բեռնվածքը հավասար է ջեռուցման մասնակի բեռնվածքին, որի դեպքում դրսի օդի ջերմաստիճանը հավասար է նոմինալ նախագծային ջերմաստիճանին.

- 38) «արդյունավետության հայտարարված գործակից» (*ԱԳհ.(T_j)*) կամ «առաջնային էներգիայի հայտարարված գործակից» (*ԱԷԳհ.(T_j)*) նշանակում է սահմանափակ թվով կոնկրետ բիների դեպքում արդյունավետության գործակից կամ առաջնային էներգիայի գործակից.
- 39) «երկարժեք ջերմաստիճան» (*T_{երկարժեք}*) նշանակում է ջեռուցման համար մատակարարի կողմից հայտարարված դրսի օդի այն ջերմաստիճանը՝ արտահայտված աստիճան Ցելսիուսով, որի պայմաններում հայտարարված ջերմային հզորությունը հավասար է ջեռուցման մասնակի բեռնվածքին, իսկ դրանից ցածր պայմաններում հայտարարված ջերմային հզորությունն ապահովելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ջերմային հզորություն՝ ջեռուցման մասնակի բեռնվածքը բավարարելու համար.
- 40) «շահագործման սահմանային ջերմաստիճան» (*T_{ՇՍ}*) նշանակում է ջեռուցման համար մատակարարի կողմից հայտարարված դրսի օդի այն ջերմաստիճանը՝ արտահայտված աստիճան Ցելսիուսով, որից ցածր պայմաններում սենքի՝ ջերմության՝ օդից ջուր փոխանցմամբ ջերմային պոմպով տաքացուցիչը կամ ջերմության՝ օդից ջուր փոխանցմամբ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը չի կարողանա ապահովել որեւէ ջերմային հզորություն, իսկ ջեռուցման հայտարարված հզորությունը հավասար է զրոյի.
- 41) «ջրային ջեռուցման շահագործման սահմանային ջերմաստիճան» (*ՋՋՇՍՋ*) նշանակում է ջեռուցման համար մատակարարի կողմից հայտարարված բաց թողնվող ջրի այն ջերմաստիճանը՝ արտահայտված աստիճան Ցելսիուսով, որից բարձր պայմաններում սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը չի կարողանա ապահովել որեւէ ջերմային հզորություն, իսկ ջեռուցման հայտարարված հզորությունը հավասար է զրոյի.

- 42) «ջերմային հզորության ցիկլային փոփոխությունների միջև ընկած ժամանակահատված» (*Pghl.h*) նշանակում է ընդհանուր ջերմային հզորություն ջեռուցման ցիկլային փոփոխությունների փորձարկումների միջև ընկած ժամանակահատվածի ընթացքում՝ արտահայտված կՎտ-ով.
- 43) «ցիկլային փոփոխությունների միջև ընկած ժամանակահատվածի արդյունավետություն» (*ԱԳցիկլ.* կամ *ԱԷԳցիկլ.*) նշանակում է արդյունավետության միջին գործակից կամ առաջնային էներգիայի միջին գործակից ցիկլային փոփոխությունների փորձարկումների միջև ընկած ժամանակահատվածի ընթացքում՝ արտահայտված կՎտժ-ով՝ *ԱԱԶԱ-ի հաշվարկով*, եւ (կամ) կՎտժ-ով՝ վերջնական էներգիայի հաշվարկով՝ բազմապատկած *ՓԳ-ով*, որը հաշվարկվում է հետեւյալ ձեւով՝ ժամանակահատվածի ընթացքում կՎտժ-ով արտահայտված ընդհանուր ջերմային հզորությունը բաժանած միեւնույն ժամանակահատվածի ընթացքում էներգիայի ընդհանուր սպառման արժեքի.
- 44) «նվազման գործակից» (*Ն.գ.հ*) նշանակում է սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի՝ ցիկլային փոփոխությունների հետեւանքով արդյունավետության կորստի չափը. Եթե *Ն.գ.հ-ն* չի սահմանվում չափման միջոցով, ապա ընդհանուր նվազման գործակիցն է՝ $Ն.գ.հ = 0,9$.
- 45) «ակտիվ ռեժիմ» նշանակում է փակ տարածքում ջերմային բեռնվածքով ժամերին եւ ակտիվացված ջեռուցման ֆունկցիային համապատասխանող վիճակ. այս վիճակը կարող է ներառել սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի ցիկլային փոփոխությունը՝ դրսի օդի անհրաժեշտ ջերմաստիճանին հասնելու կամ այն պահպանելու համար.

- 46) «անջատված ռեժիմ» նշանակում է վիճակ, երբ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը միացված է էլեկտրասնուցման ցանցին եւ չի կատարում որեւէ ֆունկցիա, այդ թվում՝ վիճակ, երբ գործում է միայն անջատված ռեժիմը, եւ վիճակ, երբ նախատեսվում են միայն էլեկտրամագնիսական համատեղելիությունն ապահովելու ֆունկցիաները՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004/108/ԵՀ հրահանգին³ համաձայն.
- 47) «թերմոստատն անջատված ռեժիմ» նշանակում է առանց ջերմային բեռնվածքի եւ ակտիվացված ջերմային ֆունկցիայի ժամերին համապատասխանող վիճակ, ընդ որում, ջերմային ֆունկցիան միացված է, սակայն սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչը չի գործում. ակտիվ ռեժիմում ցիկլային փոփոխությունը չի համարվում թերմոստատն անջատված ռեժիմ.
- 48) «կարտերային տաքացուցչի ռեժիմ» նշանակում է վիճակ, երբ ջեռուցման սարքը ակտիվացված է սառնազդակների միգրացիան դեպի կոմպրեսոր կանխելու համար, որպեսզի սահմանափակվի սառնազդակների՝ յուրի մեջ կուտակումը, երբ կոմպրեսորը գործարկվում է.
- 49) «անջատված ռեժիմում էներգիայի սպառում» (*P_{ULRUS4US}*) նշանակում է սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի էներգիայի սպառումն անջատված ռեժիմում՝ արտահայտված կՎտ-ով.
- 50) «թերմոստատն անջատված ռեժիմում էներգիայի սպառում» (*P_{ԹԱ}*) նշանակում է սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի էներգիայի սպառումը թերմոստատն անջատված ռեժիմում՝ արտահայտված կՎտ-ով.

³ ՊՏ L 390, 2004 թվականի դեկտեմբերի 31, էջ 24:

- 51) «կարտերային տաքացուցչի ռեժիմում էներգիայի սպառում (P_v) նշանակում է սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի էներգիայի սպառումը կարտերային տաքացուցչի ռեժիմի ակտիվացված վիճակում՝ արտահայտված կՎտ-ով.
- 52) «ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպ» նշանակում է սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչ, որը հատուկ նախատեսված է ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառվելու համար եւ չի կարող ջերմություն հաղորդել ջրին $52\text{ }^{\circ}\text{C}$ ելքի ջերմաստիճանում՝ միջին կլիմայի համար նոմինալ նախագծային պայմաններում $-7\text{ }^{\circ}\text{C}$ ($-8\text{ }^{\circ}\text{C}$) չոր (թաց) ջերմաչափի մուտքի ջերմաստիճանի դեպքում.
- 53) «ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառություն» նշանակում է կիրառություն, երբ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչն ապահովում է դրա հայտարարված ջերմային հզորությունը դրսի ջերմափոխանակիչ սարքի՝ $35\text{ }^{\circ}\text{C}$ ելքի ջերմաստիճանի պայմաններում.
- 54) «միջին ջերմաստիճանի պայմաններում կիրառություն» նշանակում է կիրառություն, երբ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչը կամ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչն ապահովում է դրա հայտարարված ջերմային հզորությունը դրսի ջերմափոխանակիչ սարքի՝ $55\text{ }^{\circ}\text{C}$ ելքի ջերմաստիճանի պայմաններում.

Համակցված տաքացուցչի դեպքում ջրային ջեռուցմանն առնչվող սահմանումները.

- 55) «բեռնվածքի պրոֆիլ» նշանակում է ջրառի տրված հաջորդականություն՝ VII հավելվածի 15-րդ աղյուսակով սահմանված կարգով. յուրաքանչյուր համակցված տաքացուցիչ համապատասխանում է առնվազն մեկ բեռնվածքի պրոֆիլի.

- 56) «ջրառ» նշանակում է օգտակար ջրի հոսքի արագության, օգտակար ջրի ջերմաստիճանի, օգտակար էներգատարության եւ պիկային ջերմաստիճանի տրված համակցություն՝ VII հավելվածի 15-րդ աղյուսակում սահմանված կարգով.
- 57) «օգտակար ջրի հոսքի արագություն» (f) նշանակում է նվազագույն հոսքի արագություն՝ արտահայտված լիտր րոպեով, որի ընթացքում տաք ջուրը միանում է ելքային էներգիային՝ VII հավելվածի 15-րդ աղյուսակում սահմանված կարգով.
- 58) «օգտակար ջրի ջերմաստիճան» (T_m) նշանակում է ջրի ջերմաստիճան՝ արտահայտված աստիճան Ցելսիուսով, որի պայմաններում տաք ջուրը սկսում է միանալ ելքային էներգիային՝ VII հավելվածի 15-րդ աղյուսակում սահմանված կարգով.
- 59) «օգտակար էներգատարություն» (Q_{top}) նշանակում է տաք ջրի էներգատարություն՝ արտահայտված կՎտժ-ով, որն ապահովվում է օգտակար ջրի ջերմաստիճանին հավասար կամ դրանից բարձր ջերմաստիճանի եւ օգտակար ջրի հոսքի արագությանը հավասար կամ դրանից բարձր ջրի հոսքի արագության պայմաններում՝ VII հավելվածի 15-րդ աղյուսակում սահմանված կարգով.
- 60) «տաք ջրի էներգատարություն» նշանակում է ջրի կոնկրետ ջերմային հզորության, մուտքային տաք ջրի եւ ելքային սառը ջրի միջին ջերմաստիճանի տարբերության եւ մատակարարված տաք ջրի ընդհանուր զանգվածի արտադրյալ.
- 61) «պիկային ջերմաստիճան» (T_w) նշանակում է ջրի նվազագույն ջերմաստիճան՝ արտահայտված աստիճան Ցելսիուսով, որը պետք է ապահովել ջրառի ընթացքում՝ VII հավելվածի 15-րդ աղյուսակում սահմանված կարգով.

- 62) «Ելքային էներգիա» ($Q_{ելք}$) նշանակում է բեռնվածքի կոնկրետ պրոֆիլի դեպքում ջրառի՝ կՎտժ-ով արտահայտված օգտակար էներգատարությունը՝ VII հավելվածի 15-րդ աղյուսակում սահմանված կարգով.
- 63) «առավելագույն բեռնվածքի պրոֆիլ» նշանակում է առավելագույն էներգատարությամբ բեռնվածքի պրոֆիլ, որը համակցված տաքացուցիչը կարող է ապահովել այդ բեռնվածքի պրոֆիլի ջերմաստիճանի եւ հոսքի արագության հետ կապված պայմանները կատարելիս.
- 64) «հայտարարված բեռնվածքի պրոֆիլ» նշանակում է բեռնվածքի պրոֆիլը ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը որոշելիս.
- 65) «Էլեկտրաէներգիայի օրական սպառում» ($Q_{էլեկր.}$) նշանակում է հայտարարված բեռնվածքի պրոֆիլով 24 ժամ անընդմեջ ջրային ջեռուցման դեպքում էլեկտրաէներգիայի սպառում՝ արտահայտված կՎտժ-ով՝ վերջնական էներգիայի հաշվարկով.
- 66) «վառելիքի օրական սպառում» ($Q_{վառելիք}$) նշանակում է հայտարարված բեռնվածքի պրոֆիլով 24 ժամ անընդմեջ ջրային ջեռուցման դեպքում վառելիքի սպառում՝ արտահայտված կՎտժ-ով՝ ԱԱԶԱ-ի հաշվարկով, եւ VII հավելվածի 5-րդ կետի «գ» ենթակետի իմաստով՝ արտահայտված ԳԶ-ով՝ ԱԱԶԱ-ի հաշվարկով.
- 67) «Էլեկտրաէներգիայի տարեկան սպառում» ($էSU$) նշանակում է հայտարարված բեռնվածքի պրոֆիլով եւ տրված կլիմայական պայմաններում ջրային ջեռուցման համար համակցված տաքացուցչի տարեկան էլեկտրասպառում՝ արտահայտված կՎտժ-ով՝ վերջնական էներգիայի հաշվարկով.
- 68) «վառելիքի տարեկան սպառում» ($ՎSU$) նշանակում է հայտարարված բեռնվածքի պրոֆիլով եւ տրված կլիմայական պայմաններում ջրային ջեռուցման համար համակցված տաքացուցչի վառելիքի եւ (կամ) կենսավառելիքի տարեկան սպառում՝ արտահայտված ԳԶ-ով՝ ԱԱԶԱ-ի հաշվարկով.

Արեւային սարքերին առնչվող սահմանումները.

- 69) «ոչ արեւային էներգիայի տարեկան ներդրում» ($Q_{nsարեւ.}$) նշանակում է համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորման օգտակար ջերմային հզորության մասով էլեկտրաէներգիայի (արտահայտված կՎտժ-ով՝ առաջնային էներգիայի հաշվարկով) եւ (կամ) վառելիքի (արտահայտված կՎտժ-ով՝ ԱԱԶԱ-ի հաշվարկով) տարեկան ներդրում՝ հաշվի առնելով արեւային կուտակիչի կուտակած ջերմության տարեկան չափը եւ արեւային ունակային ջրատաքացուցչի ջերմային կորուստները.
- 70) «կուտակիչի անցքի մակերես» ($U_{արեւ.}$), IV հավելվածի 1-4-րդ պատկերի իմաստով այսուհետ՝ կուտակիչի չափ, նշանակում է նախատեսված առավելագույն մակերես՝ արտահայտված մ²-ով, որով չխտացված արեւային ճառագայթումը մուտք է գործում կուտակիչ.
- 71) «կուտակիչի արդյունավետություն» ($\eta_{կուտակիչ}$) նշանակում է արեւային կուտակիչի արդյունավետությունն արեւային կուտակիչի եւ 40 Կ շրջակա միջավայրի օդի եւ 1 000 Վտ/մ² արեւային ճառագայթման համընդհանուր լուսավորության ջերմաստիճանի տարբերությունը՝ արտահայտված %-ով.
- 72) «ինքնապարպում» (h) նշանակում է ջրի եւ շրջակա միջավայրի տրված ջերմաստիճանի պայմաններում արեւային ունակային ջրատաքացուցչից փոխանցված ջերմային հզորությունը՝ արտահայտված Վտ-ով.
- 73) «տարողունակություն» (V), IV հավելվածի 1-4-րդ պատկերի իմաստով այսուհետ՝ ունակային ծավալ, նշանակում է արեւային ունակային ջրատաքացուցչի նոմինալ ծավալը՝ արտահայտված լիտրով կամ մ³-ով.
- 74) «էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառում» ($Q_{լրաց.}$), IV հավելվածի 5-րդ պատկերի իմաստով այսուհետ՝ լրացուցիչ էլեկտրաէներգիա, նշանակում է միայն արեւային էներգիայով աշխատող համակարգի տարեկան էլեկտրասպառումը՝ արտահայտված կՎտժ-ով՝ վերջնական էներգիայի

հաշվարկով, որը պայմանավորված է պոմպի գործարկման համար էներգիայի սպառմամբ եւ սպասման ռեժիմում էներգիայի սպառմամբ.

- 75) «պոմպի էներգասպառում» (*արեւ.պոմպ*) նշանակում է միայն արեւային էներգիայով աշխատող համակարգի կուտակիչի հանգույցում գտնվող պոմպի՝ էլեկտրական էներգիայի նոմինալ սպառումը՝ արտահայտված Վտ-ով.
- 76) «սպասման ռեժիմում էներգասպառում» (*արեւ.սպասմանռեժիմ*) նշանակում է միայն արեւային էներգիայով աշխատող համակարգի՝ էլեկտրական էներգիայի նոմինալ սպառումը՝ արտահայտված Վտ-ով, այն դեպքում, երբ պոմպը եւ ջերմագեներատորն ակտիվացված չեն.

Այլ սահմանումներ.

- 77) «միջին կլիմայական պայմաններ», «ավելի ցուրտ կլիմայական պայմաններ» եւ «ավելի տաք կլիմայական պայմաններ» նշանակում է համապատասխանաբար Ստրասբուրգ, Հելսինկի եւ Աթենք քաղաքներին բնորոշ ջերմաստիճանային եւ արեւային ճառագայթման համընդհանուր լուսավորության պայմաններ.
- 78) «մոդելի նույնականացուցիչ» նշանակում է ծածկագիր, սովորաբար տառաթվային նշագիր, որով կոնկրետ սենքի տաքացուցիչը, համակցված տաքացուցիչը, ջերմաստիճանի կարգավորման սարքը, արեւային սարքը, սենքի տաքացուցիչ, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումը կամ համակցված տաքացուցիչ, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումը տարբերակվում են միեւնույն ապրանքային նշանին պատկանող, մատակարարի անունը կամ վաճառողի անունը կրող այլ մոդելներից:

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Էներգաարդյունավետության դասերը****1. ՍԵՆՔԻ ՍԵՂՈՆԱՅԻՆ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ**

Տաքացուցչի, բացառությամբ ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերի կամ ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառություն ունեցող՝ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչների, սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը որոշվում է 1-ին աղյուսակում սահմանված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության հիման վրա:

Ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերի կամ ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառություն ունեցող՝ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչների սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերը որոշվում են 2-րդ աղյուսակում սահմանված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության հիման վրա:

Տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը հաշվարկվում է VII հավելվածի 3-րդ եւ 4-րդ կետերին համապատասխան՝ միջին կլիմայական պայմաններում սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի, ջերմային պոմպով համակցված տաքացուցչի եւ ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերի համար:

Աղյուսակ 1

Տաքացուցչի, բացառությամբ ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերի կամ ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառություն ունեցող՝ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը	Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը η_u %-ով
A+++	$\eta_u \geq 150$
A++	$125 \leq \eta_u < 150$
A+	$98 \leq \eta_u < 125$
A	$90 \leq \eta_u < 98$
B	$82 \leq \eta_u < 90$
C	$75 \leq \eta_u < 82$
D	$36 \leq \eta_u < 75$
E	$34 \leq \eta_u < 36$
F	$30 \leq \eta_u < 34$
G	$\eta_u < 30$

Աղյուսակ 2

Ցածր ջերմաստիճանում կիրառության համար նախատեսված՝ ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերի եւ սենքի՝ ջերմային պոմպերով տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասերը

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը	Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը η_u %-ով
A+++	$\eta_u \geq 175$
A++	$150 \leq \eta_u < 175$
A+	$123 \leq \eta_u < 150$
A	$115 \leq \eta_u < 123$

B	$107 \leq \eta_u < 115$
C	$100 \leq \eta_u < 107$
D	$61 \leq \eta_u < 100$
E	$59 \leq \eta_u < 61$
F	$55 \leq \eta_u < 59$
G	$\eta_u < 55$

2. ԶՐԱՅԻՆ ԶԵՌՈՒՑՄԱՆ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Համակցված տաքացուցչի ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասը որոշվում է 3-րդ աղյուսակում սահմանված՝ դրա ջրային ջեռուցման էներգաարդյունավետության հիման վրա:

Համակցված տաքացուցչի ջրային ջեռուցման էներգաարդյունավետությունը հաշվարկվում է VII հավելվածի 5-րդ կետին համապատասխան:

Աղյուսակ 3

**Ըստ հայտարարված բեռնվածքի ժամանակացույցի դասակարգված՝
համակցված տաքացուցիչների ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասերը, $\eta_{ջջ}$ %-ով**

	3XS	XXS	XS	S	M	L	XL	XXL
A+++	$\eta_{ջջ} \geq 62$	$\eta_{ջջ} \geq 62$	$\eta_{ջջ} \geq 69$	$\eta_{ջջ} \geq 90$	$\eta_{ջջ} \geq 163$	$\eta_{ջջ} \geq 188$	$\eta_{ջջ} \geq 200$	$\eta_{ջջ} \geq 213$
A++	$53 \leq \eta_{ջջ} < 62$	$53 \leq \eta_{ջջ} < 62$	$61 \leq \eta_{ջջ} < 69$	$72 \leq \eta_{ջջ} < 90$	$130 \leq \eta_{ջջ} < 163$	$150 \leq \eta_{ջջ} < 188$	$160 \leq \eta_{ջջ} < 200$	$170 \leq \eta_{ջջ} < 213$
A+	$44 \leq \eta_{ջջ} < 53$	$44 \leq \eta_{ջջ} < 53$	$53 \leq \eta_{ջջ} < 61$	$55 \leq \eta_{ջջ} < 72$	$100 \leq \eta_{ջջ} < 130$	$115 \leq \eta_{ջջ} < 150$	$123 \leq \eta_{ջջ} < 160$	$131 \leq \eta_{ջջ} < 170$
A	$35 \leq \eta_{ջջ} < 44$	$35 \leq \eta_{ջջ} < 44$	$38 \leq \eta_{ջջ} < 53$	$38 \leq \eta_{ջջ} < 55$	$65 \leq \eta_{ջջ} < 100$	$75 \leq \eta_{ջջ} < 115$	$80 \leq \eta_{ջջ} < 123$	$85 \leq \eta_{ջջ} < 131$
B	$32 \leq \eta_{ջջ} < 35$	$32 \leq \eta_{ջջ} < 35$	$35 \leq \eta_{ջջ} < 38$	$35 \leq \eta_{ջջ} < 38$	$39 \leq \eta_{ջջ} < 65$	$50 \leq \eta_{ջջ} < 75$	$55 \leq \eta_{ջջ} < 80$	$60 \leq \eta_{ջջ} < 85$
C	$29 \leq \eta_{ջջ} < 32$	$29 \leq \eta_{ջջ} < 32$	$32 \leq \eta_{ջջ} < 35$	$32 \leq \eta_{ջջ} < 35$	$36 \leq \eta_{ջջ} < 39$	$37 \leq \eta_{ջջ} < 50$	$38 \leq \eta_{ջջ} < 55$	$40 \leq \eta_{ջջ} < 60$
D	$26 \leq \eta_{ջջ} < 29$	$26 \leq \eta_{ջջ} < 29$	$29 \leq \eta_{ջջ} < 32$	$29 \leq \eta_{ջջ} < 32$	$33 \leq \eta_{ջջ} < 36$	$34 \leq \eta_{ջջ} < 37$	$35 \leq \eta_{ջջ} < 38$	$36 \leq \eta_{ջջ} < 40$
E	$22 \leq \eta_{ջջ} < 26$	$23 \leq \eta_{ջջ} < 26$	$26 \leq \eta_{ջջ} < 29$	$26 \leq \eta_{ջջ} < 29$	$30 \leq \eta_{ջջ} < 33$	$30 \leq \eta_{ջջ} < 34$	$30 \leq \eta_{ջջ} < 35$	$32 \leq \eta_{ջջ} < 36$
F	$19 \leq \eta_{ջջ} < 22$	$20 \leq \eta_{ջջ} < 23$	$23 \leq \eta_{ջջ} < 26$	$23 \leq \eta_{ջջ} < 26$	$27 \leq \eta_{ջջ} < 30$	$27 \leq \eta_{ջջ} < 30$	$27 \leq \eta_{ջջ} < 30$	$28 \leq \eta_{ջջ} < 32$
G	$\eta_{ջջ} < 19$	$\eta_{ջջ} < 20$	$\eta_{ջջ} < 23$	$\eta_{ջջ} < 23$	$\eta_{ջջ} < 27$	$\eta_{ջջ} < 27$	$\eta_{ջջ} < 27$	$\eta_{ջջ} < 28$

3. ԱՐԵՎԱՅԻՆ ՈՒՆԱԿԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ
 ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ, ԵԹԵ ԴՐԱՆՔ ԱՐԵՎԱՅԻՆ
 ՍԱՐՔ (ԱՐԵՎԱՅԻՆ ՍԱՐՔԻ ՄԱՍ) ԵՆ

Արեւային ունակային ջրատաքացուցչի էներգաարդյունավետության դասը, եթե այն արեւային սարք (արեւային սարքի մաս) է, որոշվում է 4-րդ աղյուսակում նշված՝ դրա ինքնապարպման հիման վրա:

Աղյուսակ 4

Արեւային ունակային ջրատաքացուցիչների էներգաարդյունավետության դասերը, եթե դրանք արեւային սարք (արեւային սարքի մաս) են

Էներգաարդյունավետության դասը	Ինքնապարպում h Վատտ-ով, լիտրով արտահայտված տարողունակությամբ՝ V
A+	$h < 5,5 + 3,16 \cdot V^{0,4}$
A	$5,5 + 3,16 \cdot V^{0,4} \leq h < 8,5 + 4,25 \cdot V^{0,4}$
B	$8,5 + 4,25 \cdot V^{0,4} \leq h < 12 + 5,93 \cdot V^{0,4}$
C	$12 + 5,93 \cdot V^{0,4} \leq h < 16,66 + 8,33 \cdot V^{0,4}$
D	$16,66 + 8,33 \cdot V^{0,4} \leq h < 21 + 10,33 \cdot V^{0,4}$
E	$21 + 10,33 \cdot V^{0,4} \leq h < 26 + 13,66 \cdot V^{0,4}$
F	$26 + 13,66 \cdot V^{0,4} \leq h < 31 + 16,66 \cdot V^{0,4}$
G	$h < 31 + 16,66 \cdot V^{0,4}$


ՀԱՎԵԼՎԱԾ III

Պիտակները

1. ՍԵՆՔԻ ՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐ

1.1. Պիտակ 1

1.1.1. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A⁺⁺- G դասերին պատկանող՝ սենքի փաթագուցիչ կաթսաները



I, II


III

IV

VI, V

- ա) Պիտակում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները՝
- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.
 - III. սենքի ջեռուցման ֆունկցիան.
 - IV. II հավելվածի 1-ին կետին համապատասխան սահմանված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը սենքի տաքացուցիչ կաթսայի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է գտնվի նույն բարձրության վրա, ինչ էներգաարդյունավետության համապատասխան դասի սլաքի ծայրը.
 - V. նումինալ ջերմատվությունը կՎտ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
 - VI. ձայնային հզորության մակարդակը՝ L_{WA} -ն, դրսում, դԲ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:
- բ) Սենքի տաքացուցիչ կաթսաների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 5-րդ կետին:

1.1.2. *Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A^{++} -G դասերին պատկանող՝ սենքի համակցված արտադրության տաքացուցիչները*



ա) Պիտակում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները՝

I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.

II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.

III. սենքի ջեռուցման ֆունկցիան.

IV. II հավելվածի 1-ին կետին համապատասխան սահմանված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը համակցված արտադրության տաքացուցչի՝ սենքի սեզոնային

ջեռուցման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է գտնվի նույն բարձրության վրա, ինչ էներգաարդյունավետության համապատասխան դասի սլաքի ծայրը.


V. նոմինալ ջերմատվությունը, այդ թվում՝ ցանկացած լրացուցիչ տաքացուցչի նոմինալ ջերմատվությունը կՎտ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.

VI. ձայնային հզորության մակարդակը՝ L_{WA} -ն, դրսում, դԲ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.

VII. լրացուցիչ էլեկտրաէներգիայի արտադրության ֆունկցիան:

բ) Սենքի՝ համակցված արտադրության տաքացուցիչների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 6-րդ կետին:

1.1.3. *Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A^{++} - G դասերին պատկանող՝ սենքի՝ ջերմային պոմպով փաքացուցիչները՝ բացառությամբ ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերի*



I, II

III

IV

VII, V

VI

ա) Պիտակում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները՝

I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.

II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.


III. սենքի ջեռուցման ֆունկցիան՝ համապատասխանաբար միջին եւ ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառության համար.

- IV. համապատասխանաբար միջին եւ ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառության համար միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածի 1-ին կետին համապատասխան՝ միջին եւ ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառության համար նախատեսված՝ սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցչի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է գտնվի նույն բարձրության վրա, ինչ էներգաարդյունավետության համապատասխան դասի սլաքի ծայրը.
- V. նոմինալ ջերմատվությունը, այդ թվում՝ ցանկացած լրացուցիչ տաքացուցչի նոմինալ ջերմատվությունը կՎտ-ով, համապատասխանաբար միջին եւ ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառության համար նախատեսված միջին, ավելի ցուրտ եւ ավելի տաք կլիմայական պայմաններում՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- VI. Եվրոպայի ջերմաստիճանային քարտեզը, որում ներկայացված են երեք ինդիկատիվ ջերմաստիճանային գոտի.
- VII. ձայնային հզորության մակարդակը՝ L_{WA} -ն, դրսում եւ ներսում (հնարավորության դեպքում), դԲ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:
- բ) Սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 7-րդ կետին: Որպես բացառություն, եթե Եվրոպական

պառլամենտի եւ Խորհրդի թիվ 66/2010 կանոնակարգով (ԵՀ) ¹ մոդելին շնորհիվ է «ԵՄ Էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ Էկոպիտակի պատճենը:

1.1.4. *Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A⁺⁺-D դասերին պատկանող՝ ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերը*

¹⁾ ՊՏ L 27, 30.1.2010թ., էջ 1:



I, II

III

IV

VII, V

VI

ա) Պիտակում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները՝

I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.


II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.

III. սենքի ջեռուցման ֆունկցիան՝ ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառության համար.

- IV. միջին կլիմայական պայմաններում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածի 1-ին կետին համապատասխան՝ ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է գտնվի նույն բարձրության վրա, ինչ էներգաարդյունավետության համապատասխան դասի սլաքի ծայրը.
- V. նոմինալ ջերմատվությունը, այդ թվում՝ ցանկացած լրացուցիչ տաքացուցչի նոմինալ ջերմատվությունը կՎտ-ով, միջին, ավելի ցուրտ եւ ավելի տաք կլիմայական պայմաններում՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- VI. Եվրոպայի ջերմաստիճանային քարտեզը, որում ներկայացված են երեք ինդիկատիվ ջերմաստիճանային գոտի.
- VII. ձայնային հզորության մակարդակը՝ L_{WA} -ն, ներսում (հնարավորության դեպքում) եւ դրսում, դԲ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:
- բ) Ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերի պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 8-րդ կետին: Որպես բացառություն, եթե Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 66/2010 կանոնակարգով (ԵԽ) մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

1.2. Պիտակ 2


1.2.1. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A⁺⁺⁺-D դասերին պատկանող՝ սենքի տաքացուցիչ կաթսաները



ա) Պիտակում պետք է ընդգրկվեն 1.1.1(ա) կետում թվարկված տեղեկությունները:

բ) Սենքի տաքացուցիչ կաթսաների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 5-րդ կետին:

1.2.2. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A⁺⁺⁺-D դասերին պատկանող՝ սենքի տաքացուցիչ կաթսաները



I, II

III

IV


VI, V

VII

ա) Պիտակում պետք է ընդգրկվեն 1.1.2(ա) կետում թվարկված տեղեկությունները:

բ) Սենքի՝ համակցված արտադրության տաքացուցիչների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 6-րդ կետին:

1.2.3. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A+++ -D դասերին պատկանող՝ սենքի ջերմային պոմպերով փաքացուցիչները՝ բացառությամբ ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերի



I, II

III

IV


VII, V

VI

ա) Պիտակում պետք է ընդգրկեն 1.1.3(ա) կետում թվարկված տեղեկությունները:

բ) Սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 7-րդ կետին:

1.2.4. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A+++ -D դասերին պատկանող՝ ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերը



I, II

III

IV

VII, V

VI


ա) Պիտակում պետք է ընդգրկվեն 1.1.4(ա) կետում թվարկված տեղեկությունները:

բ) Ցածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերի պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 8-րդ կետին:

2. ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐ

2.1. Պիտակ 1

2.1.1. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A⁺⁺-G դասերին եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության A-G դասերին պատկանող համակցված փաթեցուցիչ կաթսաները



I, II

III

IV

VI, V, VII


ա) Պիտակում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները՝

- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.

- III. սենքի ջեռուցման ֆունկցիան եւ ջրային ջեռուցման ֆունկցիան, այդ թվում՝ հայտարարված բեռնվածքի պրոֆիլը՝ արտահայտված համապատասխան տառով՝ VII հավելվածի 15-րդ աղյուսակին համապատասխան.
- IV. սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան՝ համակցված տաքացուցիչ կաթսայի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է գտնվի նույն բարձրության վրա, ինչ էներգաարդյունավետության համապատասխան դասի սլաքի ծայրը.
- V. նոմինալ ջերմատվությունը կՎտ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- VI. ձայնային հզորության մակարդակը՝ L_{WA} -ն, ներսում, դԲ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- VII. ոչ պիկ ժամերին աշխատելու հնարավորություն ունեցող համակցված տաքացուցիչ կաթսաների համար կարող է ավելացվել սույն հավելվածի 9(դ)(11) կետում նշված գրաֆիկական պատկերը:

բ) Համակցված տաքացուցիչ կաթսաների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 9-րդ կետին:

2.1.2. *Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A^{++} -G դասերին եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության A-G դասերին պատկանող համակցված տաքացուցիչ կաթսաները*



ա) Պիտակում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները՝

I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.


II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.

III. սենքի ջեռուցման ֆունկցիան՝ միջին ջերմաստիճանի պայմաններում կիրառության համար, եւ ջրային ջեռուցման ֆունկցիան, այդ թվում՝ հայտարարված բեռնվածքի պրոֆիլը՝ արտահայտված համապատասխան տառով՝ VII հավելվածի 15-րդ աղյուսակին համապատասխան.

- IV. միջին կլիմայական պայմաններում միջին ջերմաստիճանի պայմաններում կիրառության համար նախատեսված՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը եւ միջին կլիմայական պայմաններում ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան՝ ջերմային պոմպով համակցված տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է գտնվի նույն բարձրության վրա, ինչ էներգաարդյունավետության համապատասխան դասի սլաքի ծայրը.
- V. նոմինալ ջերմատվությունը, այդ թվում՝ ցանկացած լրացուցիչ տաքացուցչի նոմինալ ջերմատվությունը կՎտ-ով, միջին, ավելի ցուրտ եւ ավելի տաք կլիմայական պայմաններում՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- VI. Եվրոպայի ջերմաստիճանային քարտեզը, որում ներկայացված են երեք ինդիկատիվ ջերմաստիճանային գոտի.
- VII. ձայնային հզորության մակարդակը՝ L_{WA} -ն, ներսում (հնարավորության դեպքում) եւ դրսում, դԲ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- VIII. ոչ պիկ ժամերին աշխատելու հնարավորություն ունեցող՝ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների համար կարող է ավելացվել սույն հավելվածի 10(դ)(12) կետում նշված գրաֆիկական պատկերը:
- բ) Ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 10-րդ կետին:

2.2. Պիտակ 2


2.2.1. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A+++–G դասերին եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության A+–F դասերին պատկանող համակցված տաքացուցիչ կաթսաները



ա) Պիտակում պետք է ընդգրկվեն 2.1.1(ա) կետում թվարկված տեղեկությունները:

բ) Համակցված տաքացուցիչ կաթսաների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 9-րդ կետին:

2.2.2. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A+++–G դասերին եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության A+–F դասերին պատկանող՝ ջերմային պոմպով համակցված տաքացուցիչները



I, II

III

IV

VII, VI, V


VIII

ա) Պիտակում պետք է ընդգրկվեն 2.1.2(ա) կետում թվարկված տեղեկությունները:

բ) Ջերմային պոմպով համակցված տաքացուցիչների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 10-րդ կետին:

3. ՍԵՆՔԻ ՏԱՔԱՅՈՒՑՉԻՑ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԵՎԱՅԻՆ ՍԱՐՔԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՀԱՄԱԼԻՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A+++–G դասերին պատկանող՝ սենքի փաթացուցից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների պիտակը




ա) Պիտակում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները՝

- I. վաճառողի եւ (կամ) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
- II. վաճառողի եւ (կամ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը.

- III. սենքի ջեռուցման ֆունկցիան.
- IV. սենքի տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածի 1-ին կետին համապատասխան.
- V. նշում այն մասին, թե արդյոք արեւային կուտակիչը, ունակային ջրատաքացուցիչը, ջերմաստիճանի կարգավորման սարքը եւ (կամ) սենքի լրացուցիչ տաքացուցիչը կարող են ընդգրկվել սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորման կազմում.
- VI. սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորման՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածի 5-րդ կետին համապատասխան՝ սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորման՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է գտնվի նույն բարձրության վրա, ինչ էներգաարդյունավետության համապատասխան դասի սլաքի ծայրը.
- բ) սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 11-րդ կետին: Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A⁺⁺⁺-D դասերին պատկանող՝ սենքի տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների դեպքում A⁺⁺⁺-G սանդղակի վերջին E - G դասերը կարելի է բաց թողնել:

4. ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՔԱՑՈՒՑՉԻՑ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԵՎԱՅԻՆ ՍԱՐՔԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՀԱՄԱԼԻՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Տարածքի ջեռուցման էներգաարդյունավետության A+++–G դասերին պատկանող՝ սենքի փաթացուցից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների պիտակը



ա) Պիտակում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները՝

I. վաճառողի եւ (կամ) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.


II. վաճառողի եւ (կամ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը.

- III. սենքի ջեռուցման ֆունկցիան եւ ջրային ջեռուցման ֆունկցիան, այդ թվում՝ հայտարարված բեռնվածքի պրոֆիլը՝ արտահայտված համապատասխան տառով՝ VII հավելվածի 15-րդ աղյուսակին համապատասխան.
- IV. համակցված տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը եւ ջրային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝ սահմանված II հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան.
- V. նշում այն մասին, թե արդյոք արեւային կուտակիչը, ունակային ջրատաքացուցիչը, ջերմաստիճանի կարգավորման սարքը եւ (կամ) լրացուցիչ տաքացուցիչը կարող են ընդգրկվել համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորման կազմում.
- VI. համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորման՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝ սահմանված IV հավելվածի 6-ին կետին համապատասխան՝ համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքերից բաղկացած համալիր սարքավորման՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է գտնվի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
- VII. համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորման՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝ սահմանված IV հավելվածի 6-րդ կետին համապատասխան՝

համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորման՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է գտնվի նույն բարձրության վրա, ինչ էներգաարդյունավետության համապատասխան դասի սլաքի ծայրը:

- բ) Համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների պիտակի դիզայնին վերաբերող ասպեկտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 12-րդ կետին: Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության A⁺⁺⁺-D դասերին պատկանող՝ համակցված տաքացուցչից, ջերմաստիճանի կարգավորման եւ արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների դեպքում A⁺⁺⁺-G սանդղակի վերջին E - G դասերը կարելի է բաց թողնել:

5. Սենքի տաքացուցիչ կաթսաների պիտակը պետք է ունենա հետևյալ ձևը՝



որտեղ՝

- ա) պիտակը պետք է ունենա առնվազն 105 մմ լայնություն եւ 200 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է մնա վերը նշված տեխնիկական մասնագրերին համապատասխանող:

- բ) Հետնաշերտը պետք է լինի սպիտակ:
- գ) Գույները պետք է ունենան ԿԿԴՍ ծածկագիրը՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ հետեւյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ:
- դ) Պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին).

1. ԵՄ պիտակի եզրագիծը՝ 4 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3.5 մմ:

2. ԵՄ պատկերանիշը՝ Գույները՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

3. Էներգապիտակը՝ Գույնը՝ X-00-00-00: Գրաֆիկական պատկերը՝ ինչպես պատկերված է՝ ԵՄ պատկերանիշ + էներգաարդյունավետության պիտակ՝ լայնությունը՝ 86 մմ, բարձրությունը՝ 17 մմ:

4. Պատկերանիշի տակ գտնվող եզրագիծը՝ 1 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, երկարությունը՝ 86 մմ:

5. Սենքի ջեռուցման ֆունկցիան՝

— **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես ներկայացված է:

6. Համապատասխանաբար A++-G եւ A+++ -D սանդղակները՝

— **Սլաքը՝** բարձրությունը՝ 5 մմ, տարածությունը՝ 1,3 մմ, գույները՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Յոթերորդ դասը՝ 00-X-X-00,

Ութերորդ դասը՝ 00-X-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 14 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերեւի, գտնվում են մեկ շարքի վրա,

— **Սլաքը՝** բարձրությունը՝ 7 մմ, տարածությունը՝ 1 մմ, գույները՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 16 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերեւի, գտնվում են մեկ շարքի վրա:

7. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝

— **Սլաքը՝** լայնությունը՝ 22 մմ, բարձրությունը՝ 12 մմ, 100 % սեւ,

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերեւի, գտնվում են մեկ շարքի վրա:

8. Զայնային հզորության մակարդակը, ներսում՝

- **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես ներկայացված է,
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3,5 մմ,
- **«YZ» արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 20 կետ, 100 % սեւ,
- **«ԴԲ» տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 15 կետ, 100 % սեւ:

9. Նոմինալ ջերմատվությունը՝

- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3,5 մմ,
- **«YZ» արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 45 կետ, 100 % սեւ,
- **«կՎտ» տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 30 կետ, 100 % սեւ:


10. Պիտակի ներմուծման տարին եւ կանոնակարգի համարը.

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 10 կետ:

11. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը:**12. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը.**

Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 86 x 12 մմ տարածքում:

6. Սենքի՝ համակցված արտադրության տաքացուցիչների պիտակը պետք է ունենա հետևյալ ձևը՝



որտեղ՝

- ա) պիտակը պետք է ունենա առնվազն 105 մմ լայնություն եւ 200 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է մնա վերը նշված տեխնիկական մասնագրերին համապատասխանող:

- բ) հետնաշերտը պետք է լինի սպիտակ.
- գ) գույները պետք է ունենան ԿԿԴՍ ծածկագիրը՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ հետեյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.
- դ) պիտակը պետք է բավարարի հետեյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին)՝

1. ԵՄ պիտակի եզրագծերը՝ 4 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3,5 մմ:

2. ԵՄ պատկերանիշը՝ Գույները՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

3. Էներգապիտակը՝ Գույնը՝ X-00-00-00: Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ներկայացված է՝ ԵՄ պատկերանիշ + էներգաարդյունավետության պիտակ՝ լայնությունը՝ 86 մմ, բարձրությունը՝ 17 մմ:

4. Պատկերանիշի տակ գտնվող եզրագիծը՝ 1 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, երկարությունը՝ 86 մմ:

5. Սենքի ջեռուցման ֆունկցիան՝

— **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես ներկայացված է:

6. Համապատասխանաբար A++-G եւ A+++-D սանդղակները՝

— **Սլաքը՝** բարձրությունը՝ 5 մմ, տարածությունը՝ 1,3 մմ, գույները՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Յոթերորդ դասը՝ 00-X-X-00,

Ութերորդ դասը՝ 00-X-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 14 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերեւի, գտնվում են մեկ շարքի վրա:

— **Սլաքը՝** բարձրությունը՝ 7 մմ, տարածությունը՝ 1 մմ, գույները՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 16 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերեւի, գտնվում են մեկ շարքի վրա:

7. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝

— **Սլաքը՝** լայնությունը՝ 22 մմ, բարձրությունը՝ 12 մմ, 100 % սեւ,

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերեւի, գտնվում են մեկ շարքի վրա:

8. Ձայնային հզորության մակարդակը, ներսում՝

- **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես ներկայացված է,
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3,5 մմ,
- **«YZ» արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 20 կետ, 100 % սեւ,
- **«ԴԲ» տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 15 կետ, 100 % սեւ:

9. Նոմինալ ջերմաստվությունը՝

- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3,5 մմ,
- **«YZ» արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 45 կետ, 100 % սեւ,
- **«կՎտ» տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 30 կետ, 100 % սեւ:

10. Էլեկտրաէներգիայի ֆունկցիան՝

- **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես ներկայացված է,
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3,5 մմ:


11. Պիտակի ներմուծման տարին եւ կանոնակարգի համարը.

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 10 կետ:

12. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը:**13. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը.**

Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 86 x 12 մմ տարածքում:

7. Սենքի՝ ջերմային պոմպով տաքացուցիչների պիտակը պետք է ունենա հետևյալ ձևը՝



որտեղ՝

- ա) պիտակը պետք է ունենա առնվազն 105 մմ լայնություն եւ 200 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է մնա վերը նշված տեխնիկական մասնագրերին համապատասխանող:

- բ) հետնաշերտը պետք է լինի սպիտակ.
- գ) գույները պետք է ունենան ԿԿԴՍ ծածկագիրը՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ հետեւյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.
- դ) Պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին).

1. ԵՄ պիտակի եզրագիծը՝ 4 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3,5 մմ:

2. ԵՄ պատկերանիշը՝ Գույները՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

3. Էներգապիտակը՝ Գույնը՝ X-00-00-00: Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ներկայացված է՝ ԵՄ պատկերանիշ + էներգաարդյունավետության պիտակ՝ լայնությունը՝ 86 մմ, բարձրությունը՝ 17 մմ:

4. Պատկերանիշի տակ գտնվող եզրագիծը՝ 1 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, երկարությունը՝ 86 մմ:

5. Սենքի ջեռուցման ֆունկցիան՝

— **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես ներկայացված է:

6. Միջին եւ ցածր ջերմաստիճանի պայմաններում կիրառությունը՝

— «55 °C» եւ «35 °C» տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 14 կետ, 100 % սեւ:

7. Համապատասխանաբար A++-G եւ A+++ -D սանդղակները՝

— **Սլաքը՝** բարձրությունը՝ 5 մմ, տարածությունը՝ 1,3 մմ, գույները՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Յոթերորդ դասը՝ 00-X-X-00,

Ութերորդ դասը՝ 00-X-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 14 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերելի, գտնվում են մեկ շարքի վրա:

— **Սլաքը՝** բարձրությունը՝ 7 մմ, տարածությունը՝ 1 մմ, գույները՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 16 կետ, գլխատառերով, սպիտակ, "+" պայմանանշանները՝ տողավերելի, գտնվում են մեկ շարքի վրա:

8. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության դասը՝

— **Սլաքը՝** լայնությունը՝ 19 մմ, բարձրությունը՝ 12 մմ, 100 % սեւ,

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, գլխատառերով, սպիտակ, «+» պայմանանշանները՝ տողավերեւի, գտնվում են մեկ շարքի վրա:

9. Ձայնային հզորության մակարդակը, ներսում (անհրաժեշտության դեպքում) եւ դրսում՝

- **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես ներկայացված է,
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3,5 մմ,
- **«YZ» արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 20 կետ, 100 % սեւ,
- **«ԴԲ» տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 15 կետ, 100 % սեւ:

10. Նոմինալ ջերմատվությունը՝

- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյունները՝ 3,5 մմ,
- **«YZ» արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, առնվազն 15 կետ, 100 % սեւ,
- **«ԿՎտ» տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 15 կետ, 100 % սեւ:

11. Եվրոպայի ջերմաստիճանային քարտեզը եւ գունավոր քառակուսիները՝

- **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես ներկայացված է,
- Գույները՝

Մուգ կապույտ՝ 86-51-00-00.

Կապույտի միջին երանգ՝ 53-08-00-00.

Բաց կապույտ՝ 25-00-02-00:


12. Պիտակի ներմուծման տարին եւ կանոնակարգի համարը.

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 10 կետ:

13. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը:**14. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը.**

Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 86 x 12 մմ տարածքում:

8. Յածր ջերմաստիճանում աշխատող ջերմային պոմպերի պիտակը պետք է ունենա հետևյալ ձևը՝



որտեղ՝

ա) պիտակը պետք է ունենա առնվազն 105 մմ լայնություն եւ 200 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է մնա վերը նշված տեխնիկական մասնագրերին համապատասխանող:

